

11832

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՅ
ՍՈՑ. ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ի. ՄԱՅՁԵԼ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՇՏՊԱՆԵԼ
ՓՈՔՐ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ВИАДИОСКИ
ИНСТИТУТА
ВОСТОЧНОСЛАВЯН
Ленинградский
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1928

618.95

Կ-23

Ca 2646

1928 №690
04 AUG 2010

ՀԱՅԿ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ ՍՈՑ. ԴԱՏԱՐԱՎՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

618.95

Մ-23

Ի. ՄԱՅԱԵԼ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՇՏՊԱՆԵԼ
ՓՈՔՐ ՅԵՐԵՒԱՆԵՐԻՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ



ВИСШЕГО
ИНСТИТУТА
ЛИНГВИСТИКИ
Академии Наук
СССР

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Լ Ե Վ ա 6 — 1928

24.06.2013

8250

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԲՈՒՅԿ № 8



60188 - 67

Գրառեպլար 714 ք. հ. 744 Տիրաժ 3000

Պետհրատի 2-րդ տպարան Յերևանում — 608

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ՊԱՇՏՊԱՆԵԼ ՓՈԲՐ ՅԵ- ՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Առողջ և ամրակազմ յերեխաներ մեծաց-
նելու համար հարկավոր է իմանալ, թե ինչն է
վնասակար նրանց համար և ինչն ոգտակար:

Բավական չէ միայն սիրել յերեխաներին:
Շատ հաճախ մայրերը յերեխայի սիրուց ամե-
նեին այն չեն անում, ինչ հարկավոր է և չի-
մանալով վնասում են յերեխային, փոխանակ ոգ-
նելու:

Հիվանդություններից յերեխաներին պաշտ-
պանելու համար պետք է իմանալ, թե ինչով են
հիվանդանում փոքր յերեխաները:

Յերեքից մինչև լոթ տարեկան հասակի
յերեխաներն ամենից շատ հիվանդանում են
վարակիչ հիվանդություններով, և ամենից շատ
նրանք հիվանդանում են զրիպպով, կարմրու-
կով, քուրթեշով, դիֆտերիաով, ջրծաղիկով,
կապույտ հազով, խոզուկով, կարմրատակով:

Բայց ավելի լուրջ հիվանդություններ տու-

բերկուցողն ու սիֆիլիսն են: Փոքր յերեխաները շատ հաճախ ունենում են և զանազան տեսակ ձիճուկներ: Նմանապես չպետք է մոռանալ և ախ, վոր փոքր յերեխաները կարող են ունենալ և մաշկի զանազան վարակիչ հիվանդութիւններ, վորոնք հեշտութեամբ անցնում են մեկից մյուսին:

Այժմ ծանոթանանք, թե ինչպես են արտահայտվում յերեխաների վրա այդ հիվանդութիւնները, և ինչ պետք է անել յերեխային նրանցից պաշտպանելու համար: Մենք արդեն ասացինք, վոր վարակիչ հիվանդութիւններ հաճախ պատահում են:

Ի՞նչ է վարակիչ հիվանդութիւնը:

Վարակիչ կոչվում է այն հիվանդութիւնը, վոր հեշտութեամբ անց է կենում մի յերեխայից մյուսին: Կան վարակիչ հիվանդութիւններ, վորոնք կարող են անցնել իրերի կամ ուրիշ մարդու միջոցով: Կան և վարակիչ հիվանդութիւններ, վորոնք անց են կենում միջատների, ջրի և կաթի միջոցով: Մեկ յերեխայից մյուսին հեշտ անցնող վարակիչ հիվանդութիւնների թվին են պատկանում՝ գրիպը, կարմրուկը, ջրծաղիկը, կարմրտակը, խոզուկը, կապույտ հազը: Գութեշն ու դիֆտերիաը կարող են անցնել թե մեկ յերեխայից մյուսին նաև առար-

կաների ու յերրորդ անձի միջոցով: Միջատների միջոցով անց են կենում բժավոր և հետադարձ տիֆը (փայտջիլ, լու, վոջիլ), դողերոցը (մոծակներ): Կեղտոտված ջրի միջոցով անց են կենում վորովայնի տիֆն ու կանիճը:

Վարակված յերեխան իսկույն չի հիվանդանում: Մինչեւ հիվանդութեան նշանների յերևալը, պետք է մի վորոշ ժամանակ անցնի (զաղտնի շրջան): Այդ գաղտնի շրջանի անցնելուց հետո, վորը տարբեր է լինում զանազան հիվանդութիւնների դեպքում, յերևան են գալիս հիվանդութեան նշանները: Կան հիվանդութիւններ, վորոնք բիծեր են առաջացնում հիվանդ յերեխայի մաշկի վրա (կարմրուկը, բութեշը, ջրծաղիկը, կարմրտակը), կան հիվանդութիւններ, վորոնք ուրիշ նշաններով են սկսվում (կապույտ հազը—հազով, խոզուկը—ականջագեղձի ուռուցքով, դիֆտերիաը—բերանի ուռուցքով և ջրափառով և այլն):

Հիվանդութիւնն անցնելուց հետո չել չի կարելի թույլատրել այդ յերեխային մոտենալ ուրիշներին: Թեև առողջացած յերեխան կարող է արտաքուստ բոլորովին առողջ յերևալ, բայց նա դեռ կարող է վարակել ուրիշներին. պետք է սպասել մի վորոշ ժամանակ, մինչև վոր այդ յերեխան բոլորովին անվտանգ դառնա ուրիշնե-

ընդ համար: Յեւ վայել ժամկետն ել տարբեր ե
զանազան հիվանդութիւններն դեպքում: Մայ-
րերը շատ հաճախ չեն իմանում այս, և թույլ են
տալիս իրենց յերեխային մոտենալ ուրիշներին
ժամանակից վաղ: Այս դեպքերում վարակը հեշ-
տությամբ տարածվում ե և հաճախ մի մոր
սխալի պատճառով, ստիպված, փակում են մը-
սուրը կամ մանկապարտեզը:

Կան հիվանդութիւններ, վորոնք թեթև են
անցնում (կարմրտակը, խոզուկը), բայց կան և
այնպիսիները, վորոնք լուրջ ընթացք են ունե-
նում և զանազան բարդութիւններ առաջացնում
(կարմրուկը, քուրեշը, դիֆտերիա):

Այժմ անցնենք մանրամասնորեն չուրաքան-
չչուր վարակիչ հիվանդութիւնն առանձին:

Կարմրուկ Կարմրուկը հեշտ կերպով մի
յերեխայից միւսին անց ե կե-
նում: Ուրիշ մարդու միջոցով, առարկաների
միջոցով կարմրուկը սովորաբար չի անցնում:
Կարմրուկով վարակված յերեխան մինչև 9-10
օրը վոչնչով չի զանազանվում առողջից: Այդ
ժամանակից հետո յերեխայի ջերմը 4—5 օր մի
փոքր բարձրանում ե, բացի դրանից, հարբուխ,
թեթև հազ ունենում ե, և յերեխան վախենում
ե լույսին նայելուց: 13-14-րդ օրը (վարակու-

մից հետո) դուրս ե գալիս ցանը, առաջ յերեսի
վրա, հետո մարմնի ու հետո ձեռք ու վոտի
վրա: Յերբ կարմրուկը թեթև ե, 5-6-րդ օրը
ջերմն իջնում ե, և յերեխան սկսում ե լավա-
նալ: Յանը սովորաբար տևում ե մի բանի օր:
Յանի բաշվելուց հետո հիվանդի մարմինը թե-
փոտում ե: Կան յերեխաներ, վորոնց կարմրու-
կը շատ թեթև ե անցնում, կան այնպիսիները,
վորոնց կարմրուկը յերկար ե տևում և զանա-
զան բարդութիւններ ե տալիս: Բարդութիւն-
ներից ամենից շատ ախանջների թարախային
բորբոքում ե պատահում, թոքերի բորբոքումը
և յերկարատև հազը:

Ժողովրդի մեջ տարածված ե այն կարծի-
քը, վոր կարմրուկով պետք ե հիվանդանան բո-
լոր յերեխաները, հենց դրա համար ել, յերբ մի
ընտանիքի մեջ յերեխան հիվանդանում ե, վոչ
միայն չեն առանձնացնում հիվանդին, այլ ընդ-
հակառակը, ամեն կերպ աշխատում են, վոր
հիվանդանան բոլոր յերեխաները:

Այդ ճիշտ չե:

Ուղիղ ե, կարմրուկից պաշտպանվելն ան-
կարելի չե, և համարյա թե բոլորն ել հիվան-
դանում են կարմրուկով. միայն մի բան պետք
ե հիշել, վոր յերեխայի համար ավելի լավ ե
հիվանդանալ կարմրուկով մեծ հասակում. վոր-

քան մեծ է յերեխան, այնքան նա հեշտ է տանում հիվանդությունը և այնքան քիչ է վնասվում հիվանդությունից. ուստի պետք է պաշտպանել փոքր յերեխաներին կարմրուկով վարակվելուց:

Կարմրուկի խիստ տարածման պատճառն այն է, վոր հաճախ այդ հիվանդությունը չի նկատվում: Մայրերն ուշադրություն չեն դարձնում այն բանի վրա, վոր յերեխան հարբուխ ունի, վոր նա քիչ հագում է, վոր նրա աչքերը թարախոտում են և դժվարությամբ է նայում լուսին. կարծում են, վոր լուրջ բան չկա. այն ինչ հենց եդ ժամանակ է յերեխան վարակում իր ընկերներին: Այդ տեսակ կասկածելի նշաններ յերեւալիս, մայրը յուրաքանչյուր անգամ պետք է անպատճառ յերեխային ցույց տա բժշկին, վորը կարող է վորոշել հիվանդությունը ցանի դուրս գալուց առաջ և այդպիսով հնարավորություն կտա հիվանդ յերեխային առողջներից զատելու:

Սովորաբար այնպես են կարծում, վոր կարմրուկով հիվանդին պետք է մութ սենյակում պահել. այդ ճիշտ չէ և նույնիսկ վրնասակար է հիվանդի համար. լուսավոր սենյակում հիվանդությունը թեթեւ է անցնում. միայն հիվանդին լուսին հակառակ չպետք է պառկեց-

նել, վորպեսզի աչքերը քիչ զրգովեն: Շատերը նույնպես և վախենում են, վոր կարմրուկով հիվանդը կմըսի և բոլորովին չեն բացում հիվանդի սենյակի ոդանցը, ընդհակառակը, վորպեսզի հիվանդությունը թեթեւ ընթանա, պետք է հաճախ օդափոխել սենյակը, վորի ամենահարմար ջերմությունը 14⁰ ն է: Կարմրուկի դեմ, նրա կանխելու համար, բժիշկները կանխազգուշական պատվաստ են կատարում. պատվաստի համար վերցնում են հիվանդացածի արյունը: Այդ պատվաստները բոլորովին անվտանգ են: Յեթե պատվաստը բոլոր դեպքերում ել չի փրկում հիվանդանալուց, համենայն դեպս շատ բժիշկների կարծիքով, պատվաստի շնորհիվ հիվանդությունն անցնում է շատ թեթեւ:

Հիվանդացած յերեխային կարելի չէ թույլ տալ առողջի մոտ հիվանդանալուց միայն 3 շաբաթ հետո և այն ել լավ լողացնելուց հետո: Հիվանդի սենյակը պետք է լավ լվանալ և ոդափոխել:

Անփորձ մարդը շատ հեշտուկի հետ նույնպես ցան է դուրս գալիս. կա թեթեւ հարբուխ ու հազ:

Գաղանի շրջանը — 2 շաբաթ է յերբեմն

կարմրտակի ցանը շատ նմանում է բուլթեշի ցանին: Կարմրտակի շփոթումը կարմրուկի կամ քուլթեշի հետ կարող է շատ մեծ հետևանքներ ունենալ ուրիշ յերեխաների համար: Ապա ուրեմն ամեն անգամ, յերբ մայրը կասկածում է, պետք է անպատճառ յերեխային ցույց տալ բժշկին: այդպիսով կարելի չէ խուսափել շատ անախորժ հետևանքներից, թե հենց հիվանդ յերեխայի և թե ուրիշների համար:

Կարմրտակով հիվանդացած յերեխային կարելի չէ թողնել առողջների մոտ գնալ՝ հիվանդությունից 3 շաբաթ հետո, վաճառ ընդունելուց հետո: հիվանդի սենյակը պետք է լվանալ և ողափոխել:

Քուլթե Բուլթեշի վարակը շատ կայուն է: Բուլթեշն անցնում է մեկ յերեխայից մյուսին հիվանդի առարկաների միջոցով: այդ հիվանդությունը կարող է անցնել և յերրորդ անձնավորության միջոցով: Բուլթեշի գաղտնի շրջանը տևում է 2 շաբաթ: այս ժամանակամիջոցում հիվանդության վոչ մի նշան չկա հիվանդի վրա:

Բուլթեշը սովորաբար հետևյալ ձևով է արտահայտվում. յերեխան նախընթաց որը բոլորովին առողջ եր, աշխույժ և ուրախ, հանկարծ

հիվանդանում է. տաքությունը բարձրանում է, հիվանդը փսխում է, նրա գլուխը սաստիկ ցավում է, կուլ տալիս նուշնպես ցավում է. հաճախ հենց առաջին որը դուրս է գալիս ցանը. միջակ ծանրության հիվանդության դեպքում, ցանը հիվանդի մաշկի վրա մնում է 3—4 որ. ավելի ծանր դեպքերում 7—9 որ ու հետո անցնում է. մի քանի որից հետո սկսվում է թեփը, վորը զանազանվում է կարմրուկի թեփից. կարմրուկի թեփը փշրանքի չէ նմանում, իսկ քուլթեշինը, մանավանդ ձեռքի ու վոտի մատների վրա, մեծ թերթերով է լինում. շատ հաճախ թեփիցն է կարելի լինում վորոշել, վոր յերեխան քուլթեշ է ունեցել: Բուլթեշի դեպքում թեփոտելը տևում է մի քանի շաբաթ:

Բուլթեշի մի հատկությունն էլ այն է, վոր ծանր դեպքերի հետ միասին լինում են և շատ թեթև դեպքեր. յերբեմն տաքությունը քիչ է լինում, բուկը ցավում է և ցանն էլ ախրան քիչ, վոր մայրը չի նկատում: Այ, հենց այս տեսակ դեպքերն են հանդիսանում հիվանդության տարածման պատճառը:

Յուրաքանչյուր մայր պետք է ուշադրություն դարձնի յերեխայի ամեն տեսակ բկացավին, մանավանդ, յերբ բկացավը հանկարծ յերեվում է ու հետո էլ փսխում է լինում: Այս դեպ-

քերու՞մ պետք է ուշադրութեամբ հետևել ցանի դուրս գալուն, մարմնի թեփոտելուն, թեկուզ և ամենաանշան չափով լինի և անհրաժեշտ է անպայման բժշկին ցույց տալ այդ տեսակ հիվանդին:

Քուլթեշը — սկարլատինան ամենալուրջ հիվանդութիւնն է. շատ ծանր բարդութիւններ է տալիս. և այդ բարդութիւններից ամենահաճախակի պատահողը յերիկամունքների բորբոքումն է և ականջների թարախոտ-բորբոքումը. յերիկամունքների բորբոքումը սովորաբար յերևան է գալիս հիվանդութեան յերրորդ շաբթին և հիվանդն այտուց է ստանում (ուռչում է դեմքը, վոտները): Լինում են դեպքեր, յերբ հիվանդութիւնը բոլորովին աննկատելի չե անցնում շրջապատողների համար և մենք իմանում ենք նրա մասին, յերբ մայրը բերում է մեզ մոտ ուռած յերեխային. մոր հարցաքննութիւնից հետո կարելի չէ լինում պարզել, վոր յերկու շաբթ սրանից առաջ յերեխան 1—2 որ գանգատվել է բկացավից: Ուշադրութեամբ քննելուց հետո այդ տեսակ հիվանդի վրա սովորաբար կարելի չէ գտնել և թեփ ձեռք ու վոտքի մատների վրա:

Վորովհետև սկարլատինան, մինչեւ անգամ սկզբում թեթեւը, կարող է հետագայում շատ ծա-

նրը ընթացք ունենալ, ավելի լավ է այդ տեսակ հիվանդներին զետեղել հիվանդանոց. քուլթեշով հիվանդները պահանջում են բժշկի մըշտական հսկողութիւն. նրանց վաննաներ են հարկավոր. իսկ այս բոլորը տանն անել անհնար է: Ընտանիքի մեջ հենց վոր մի յերեխա հիվանդանում է, պետք է անհապաղ առանձնացնել նրանից առողջ յերեխաներին. այդպիսով հաճախ հաջողվում է կանխել նրանց հիվանդութիւնը: Առանձնացրած յերեխաներին ընկերների մոտ 2 շաբթ չպետք է թողնել. յեթէ այս ժամանակամիջոցում նրանք չհիվանդանան, կը նշանակի նրանք առողջ և ուրիշների համար վտանգավոր չեն. սկարլատինա ընկած յերեխային կարելի չէ թողնել ուրիշ յերեխաների մոտ հիվանդութիւնից վեց շաբթ հետո, բայց պետք է վաննա ընդունի ու հետո գնա ուրիշների մոտ:

Սկարլատինի վարակը շատ յերկար է մնում. նա կարող է հիվանդի առարկաների մեջ լինել, սենյակի և կարասիքի մեջ. ուստի պետք է մանրակրկիտ կերպով ախտահանել այս բոլորը. սենյակի ախտահանութիւնը կատարում են զանազան դեղերով, վորոնք սպանում են վարակը (սուլեմա, կարբոլյան թթու և այլն), իսկ առավել լավ միջոցը — հատուկ գործիքով ախտահանումն է (ֆորմալինի գոլորշիով):

Սկարլատինով հիվանդը պիտի մնա անկող-
նում, բժշկի պատվերի համաձայն. նրա կերա-
կուրները պետք է նշանակի բժիշկը. նրա համար
հարկավոր են վաննաներ և լավ ոգափոխվող
սենյակ:

Շատ հաճախ քութեշը տարածվում է այն
պատճառով, վոր մայրերը չեն նկատում թեթև
հիվանդութիւնը և յերեխան, վորը իսկապես
հիվանդ եր քութեշով, տարածում է այդ հի-
վանդութիւնը մսուրում կամ մանկապարտիզում:
Հիվանդութիւնը նմանապես տարածվում է և
այն պատճառով, վոր ժամկետից առաջ թույլ
են տալիս յերեխային գնալ ուրիշ յերեխաների
մոտ: Կան և դեպքեր, յերբ մայրը թագցնում է
յերեխայի հիվանդութիւնը. այս բոլորովին ան-
թույլատրելի յէ, վորովհետեւ նման դեպքում
մայրը շատ մեծ պատասխանատվութիւն է
վերցնում ուրիշ յերեխաների առողջութեան և
կյանքի նկատմամբ:

Դիֆթերիա Դիֆտերիա, կամ ինչպես ժո-
ղովուրդն է ասում, բկուռուցը, սովորաբար սկսվում է հանկարծ: Յերեխան
թորչնած է, գանգատվում է գլխացավից, ջեր-
մում է, մի փոքր հետո, կամ մի քանի ժամից
հետո, իսկ յերբեմն և հետևյալ որը, յերեխայի

բուկը սկսում է ցավել կուլ տալիս. յեթէ նա-
յենք բկի մեջ, սպիտակ փառ կտեսնենք:

Դիֆտերիա շատ շուտ է բժշկվում, ուստի
շատ կարևոր է վորոշել հենց սկզբից: Առաջին
որը վորոշած հիվանդութիւնը, սովորաբար լավ
հետևանք է տալիս, յերբ ժամանակին է դործ
դրված բուժումը:

Դիֆտերիա բուժում են հատուկ շիճուկով:
Բոլորովին այլ է բարձի թող արած դեպքերում.
բկի փառը շարունակում է իջնել ներքև, դեպի
շնչափողը, և յերեխան կարող է խեղդվել. բար-
ձի թող արած դեպքերում հաճախ առաջանում
են պարալիչներ և սրտի խանգարում: Պետք է
միշտ ել ուշադիր լինել, յերբ յերեխան գան-
գատվում է բկացավից, և անպատճառ դիմել
բժշկին: Չպիտի մոռանալ և այն, վոր մանր յե-
րեխաների մոտ հաճախ քիթն է տկարանում
դիֆտերիաով, քթի դիֆտերիաի դեպքում յերե-
խայի քթից արնախառ արտաթորութիւն է հո-
սում, և այդ գլխավորապես լինում է միայն մեկ
քթածակից, վորը և ծածկված է լինում փառով:
Յուրաքանչյուր մայրը պետք է միշտ ել կաս-
կածով վերաբերվի, յերբ յերեխայի հարբուխը
համառ կերպով յերկար է տևում և անպատճառ
պետք է դիմի բժշկի խորհրդին:

Դիֆտերիան անցնում է մի յերեխայից

մյուսին հիվանդի իրերի և ուրիշ անձի միջոցով. պետք է մեկուսացնել այն առողջներին, վորոնք շփում են ունեցել հիվանդի հետ: Հիվանդը կարող է գալ առողջների մոտ միայն այն ժամանակ, յերբ հիվանդության բոլոր նշաններն անց են կացել և յերբ հատուկ քննությունը ցույց է տվել, վոր նրա թե բերանի և թե բթի մեջ դիֆտերիաի վարակ չկա: Հիվանդի առարկաները, նույնպես և նրա սենյակը պետք է յենթարկել մանրակրկիտ ախտահանության: Դիֆտերիաի ամենակարևորն այն է, վոր ժամանակին միջոցներ ձեռք առնել. այդպիսով հաճախ կարելի յէ փրկել հիվանդի կյանքը:

Զրծաղիկ Զրծաղիկը սովորաբար շատ թեթև հիվանդություն է և ընթանում է առանց բարդությունների: Հիվանդները հետ շփում ունեցած յերեխան 2 շաբաթից հետո սկսում է տաքացնել. նրա մարմինը դուրս է տալիս և դուրս յելած ցանը բշտիկների պես բռնում է ամբողջ մարմինը, մինչև անգամ դուրս տվածներ կան բերանի մեջ, գլխի վրա, աչքերի մեջ: Տաքությունը սովորաբար տևում է մի քանի օր. բշտիկները չորանում են և կեղևը պոկ է գալիս մի քանի օրից հետո: Հիվանդները շատ հաճախ այնքան լավ են զգում իրենց, վոր վո-

տի վրա չեն տանում վողջ հիվանդությունը:

Մայրերը հաճախ շփոթում են ջրծաղիկը բնական ծաղիկի հետ. սրանք բոլորովին տարբեր հիվանդություն են և այդ պետք է շատ լավ հիշել. բնական ծաղիկը—մի շատ ծանր և վտանգավոր հիվանդություն է. յեթե շատ բարձր տաքություն է լինում, հիվանդը հաճախ կորցնում է գիտակցությունը, զառանցում է. քացի դրանից, հիվանդությունից հետո խոր հետքեր են մնում. բնական ծաղիկը հաճախ պատճառ է դառնում հիվանդի կուրություն և խլություն, նույնիսկ շատ հաճախ գլորում է հիվանդին գերեզման:

Բնական ծաղիկի դեմ կռվել մենք գիտենք. նրանից պաշտպանում է ծաղիկի պատվաստը. յերեխային պետք է պատվաստել առաջին ամիսներում. այդ պատվաստը պետք է կրկնել ջուրաքանչյուր 7 տարին մի անգամ:

Մայրերը շատ անգամ զարմանում են, յերբ ասում են նրանց, վոր յերեխան հիվանդացել է ջրծաղիկով: Ինչպես կարող է նա հիվանդանալ, չե՞ վոր պատվաստած է. պարզ է, վոք նրանք շփոթում են ջրծաղիկը բնականի հետ. ջրծաղիկի պատվաստ չկա:

Թեպետև ջրծաղիկը թեթև հիվանդություն է, այնուամենայնիվ պետք է պաշտպանվել նրա

79. 88/09

նից փոքր, ուժասպառ չեղած և թույլ յերեխաներին, վորովհետև ալդպիսիների հիվանդությունը ծանր ընթացք է ունենում. նմանապես այն յերեխաների ջրծաղիկն է ծանր ընթանում, վորոնք նոր են լավացել մի վորևե ուրիշ հիվանդությունից:

Ջրծաղիկով հիվանդին կարելի չէ թուլատրել առողջների մոտ, հիվանդությունից 2 շաբաթ հետո, չերբ բոլոր կեղևները թափվել են. հիվանդի սենյակը պետք է լավ լվանալ և կանոնավոր ոգափոխել:

Խոզուկ Խոզուկը մի շատ թեթև, տարափոխիկ հիվանդություն է. այդ հիվանդության միջոցին ուռչում են ականջի մոտի գեղձերը և աաքությունը բարձրանում է: Այդ հիվանդությունը շատ շուտ է տարածվում. խոզուկի դադունի շրջանը մոտավորապես 3 շաբաթ է: Մինչդպրոցական հասակն առանձնապես տրամադիր է խոզուկով հիվանդանալուն: Խոզուկի դեպքում հատուկ կանխազգուշական միջոցներ ձեռք առնելու կարիք չկա. խոզուկը չի պահանջում նույնպես հատուկ բուժում:

Տաքությունը բարձրանալիս, յերեխային պառկեցնել, վորովհետև ծամելը դժվարացել է,

ուստի պետք է ջրիկ կերակուր տալ նրան: Հիվանդին կարելի չէ թուլատրել առողջների մոտ հիվանդությունից 3 շաբաթ հետո. հիվանդի սենյակը պետք է լվանալ և ոգափոխել, հիվանդին լողացնել, նախ քան ուրիշների մոտ թողնելը:

Կապույտ հազ Կապույտ հազը գիտեն և բժշկությունից շատ քիչ բան իմացողները, մանավանդ, չերբ հիվանդությունը կատարյալ զարգացած է. այս հիվանդությունը նոպաներով բռնող հազ է. և հազի ամենախիստ միջոցին հիվանդը փախում է. բայց այդ լինում է միայն այն ժամանակ, չերբ հիվանդությունը ուժեղ զարգացած է:

Սկզբում կապույտ հազը շատ դժվար է լուծվում, նույնիսկ փորձված բժշկի համար, մինչդեռ հենց այդ ժամանակը յերեխան կարող է փոխանցել հիվանդությունը ուրիշ յերեխաների: Յերեխայի մայրը պետք է հայտնի բժիշկին՝ չի՛ չեղել, արդյոք, կապույտ հազ այն բնակարանում, վորտեղ յերեխան է ապրում, կամ այն յերեխաների մեջ, վորոնց հետ խաղում է նա: Այս հանգամանքը կողմի բժշկին ճշտորեն պարզել հիվանդությունը և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել:

Կապույտ հազի նոպաների թիվն ու զորե-

դուժյուներ տարբեր եւ և կախում ունի հիվանդութեան ծանրութիւնից: Յերբեմն կապույտ հազի ժամանակ արյուն եւ լցվում աչքի մեջ, վոր առանձնապէս վախեցնում եւ մայրերին: Արյան այս կուտակումը բոլորովին անցնում եւ, առանց մի հետք թողնելու և վոչ մի վտանգ չի սպառնում յերեխային: Կապույտ հազը տևում եւ 6—8 շաբաթ. յերբեմն թոքերի բորբոքում եւ առաջ գալիս նրանից. հիվանդը, վորքան հնարավոր եւ, պետք ե շատ մնա բաց ողում. բացօթյա մնալը միակ միջոցն եւ, վոր ոգնում եւ այդ հիվանդութեան դեպքում: Մինչև անգամ յեթե հիվանդը ձմեռը կապույտ հազ ունի, այն ժամանակ ել չպետք ե վախենալ նրան բաց ող դուրս բերել: Փոքր յերեխաների կապույտ հազն ավելի ծանր ե ընթանում, քան մեծերի: Առանձնապէս վտանգավոր ե այն յերեխաների կապույտ հազը, վորոնք տուբերկուլյոզ ունեն: Այդ տեսակ յերեխաներին առանձնապէս պետք ե պաշտպանել կապույտ հազից: Այդ տեսակ յերեխաների կապույտ հազը թոքերի բորբոքում ե առաջացնում և վատացնում ե տուբերկուլյոզը:

Գրիպա Գրիպալը մանր յերեխաների համար լուրջ հիվանդութիւն ե. վորքան

փոքր ե յերեխան այնքան ծանր կարող ե ընթանալ նրա գրիպալը: Այս պետք ե լավ իմանան նրանք, վորոնք խնամում են յերեխային: Մոր հիվանդութեան դեպքում, նա պետք ե ծածկի քիթն ու բերանը մաշկայով, կամ թաշկինակով և ալդպէս միայն նա կարող ե մոտենալ յերեխային: Բոլորովին անթույլատրելի չեւ, վոր հիվանդ մայրը համբուրի յերեխային:

Յերեխաների գրիպալը հետևյալ ձևի չե լինում՝ հարբուխ, հազ և ջերմ. կարող ե առաջանալ ախանջների և թոքերի բորբոքում:

Գրիպան առավել հեշտ տարածվում ե խիտ բնակեցրած, խեղդուկ և լավ չողափոխվող շենքում: Անհրաժեշտ ե լավ ողափոխել բնակարանը, չպետք ե վախենալ թարմ ոդից:

Գրիպալով հիվանդ յերեխային պետք ե գտել ուրիշ յերեխաներից: Բոլորովին չի կարելի թույլ տալ, վոր հիվանդ մայրը քնի առողջ յերեխայի հետ, կամ վոր հիվանդ յերեխան քնի իր յեղբայրների և քույրերի հետ: Կան դեպքեր, յերբ գրիպալը շատ թեթեւ ե լինում և անցնում մի քանի որում, բայց կան դեպքեր, յերբ գրիպալը շատ յերկար ե տևում և տալիս ե բարդութիւններ, ախանջացավ, թոքերի բորբոքում: Բայց ամենալուրջ հիվանդութիւնը—տուբերկուլյոզն ու սիֆիլիսն ե:

Դեռ շատ չի անցել այն
որից, յերբ կարծում ելին
վոր յերեխա հասակում տուրքերկուլյոզ չի լի-
նում։ վերջին տարիներս գիտնականները պար-
զել են, վոր տուրքերկուլյոզը կարող է լինել յե-
րեխաների ամենավաղ հասակում, ծծկերության
հասակում։ նախադարձական հասակի յերեխա-
ների կեսն արդեն հիվանդ է այս հիվանդու-
թյամբ։ Վոմանք յենթադրում են, վոր տուրքե-
կուլյոզն անցնում է վարակման միջոցով։ նրանց
կարծիքով տուրքերկուլյոզով հիվանդը տարա-
ծում է վարակը թքի մանրիկ կաթիլների հետ,
վոր սփռում է նա ողի մեջ իր շուրջը։ Վոմանք
յենթադրում են, վոր տուրքերկուլյոզը ծնողնե-
րից յերեխային ժառանգաբար է անցնում։

Ի՞նչպես է լինում փոքր յերեխաների տու-
րքերկուլյոզը։ Ամենքը գիտեն, վոր փոքր յերե-
խաները շատ հաճախ տկարանում են այս-
պես կոչված գեղձախտով։ Ամենքն էլ գիտեն,
վոր գեղձախտավոր յերեխաների մաշկը հիվան-
դանում է, գեղձերը մեծանում են ու թարախո-
տում առավելապես պարանոցի գեղձերը, այդ
տեսակ յերեխաներն ունեն տևական հարբուխ,
աչքացավ։ Այժմ ապացուցված է, վոր գեղձախ-
տը յերեխա հասակի տուրքերկուլյոզն է. յերե-
խաների գեղձախտը բարեհաջող ընթացք ունի։

Ուժասպառ յեղած, արնապական յերեխաները—
խսկապես տուրքերկուլյոզավորներ են. շատերը
կարծում են, վոր տուրքերկուլյոզը կամ բարա-
կացավ—թոքերի հիվանդութուն է. նրանք յեն-
թադրում են, վոր տուրքերկուլյոզավոր հիվանդը
պետք է անպատճառ հազա և խորխ արտադրի։

Բայց յերեխաների վերաբերմամբ այդ այն-
քան էլ ճիշտ չէ, տուրքերկուլյոզով հիվանդ յե-
րեխան կարող է ունենալ և վնասված թոքեր և
նա նման է հասակավոր թորախտավորին. բայց
կան տուրքերկուլյոզով հիվանդ յերեխաներ, վո-
րոնք վոչ հազ ունին, վոչ էլ խորխ. նրանց թո-
քերը վնասված չեն. նրանց տուրքերկուլյոզն
արտահայտվում է նրանով՝ վոր լավ չեն աճում,
չեն զարգանում, հաճախակի բրոնխիտ են ու-
նենում, յերբեմն ջերմում են, շուտ շուտ թոքե-
րի բորբոքում են ստանում և արնապական են։
Մայրը միշտ պետք է հիշի և հաճախ տանի յե-
րեխային բժշկի մոտ։ Փոքր յերեխաների վոս-
կորներն էլ կարող են վնասվել տուրքերկուլյո-
զից, բայց այդ սակավ է պատահում։ Այդ տե-
սակ յերեխաները պետք է յերկար ժամանակ
բժշկվեն սանատորիայում։

Առաջ կարծում ելին, վոր յերեխա հասակի
տուրքերկուլյոզը հաճախ բարեհաջող ընթացք է
դնենում։ Մինչև անգամ թոքերի վնասվածքը

կարող ե լավ ընթացք ունենալ: Այժմ յենթագրում են, վոր հասակավոր մարդու տուբերկուլյոզը մանուկ հասակի ստացած հիվանդության արտահայտութիւնն է: Վոչ մի մայր չպետք է հուսահատվի, յերբ հայտնեն, վոր նրա յերեխան տուբերկուլյոզ ունի: Ամեն ինչ կախում ունի այն բանից, թե հիվանդն ինչ նշաններ ունի: Գեղձախտը, հետամնացութիւնը, արնապակասութիւնը, հաճախ և թորերի ու վոսկորների վնասվածքը լավ ընթացք են ստանում, յերբ կանոնավոր բժշկում են նրանց:

Տուբերկուլյոզի բուժման ամենալավ միջոցները՝ ոդ, լույս և արեգակ: Այդ տեսակ հիվանդ յերեխային պետք է պահել բավականի ընդարձակ և յուսավոր սենյակում, անհրաժեշտ է մանրակրկիտ կերպով ոգափոխել հիվանդի սենյակը. չվախենալ թարմ ոդ դուրս բերելուց մինչև անգամ ամենափոքր յերեխաներին կարելի է ժամերով դուրս բերել մաքուր ոդ, միայն լավ հագցրած. յերեխաներն ամառ ժամանակ ամբողջ որով կարող են մնալ բաց ոդում, տրուսիկ հագած: Մի քանի տուբերկուլյոզային հիմնարկներում յերեխաները մինչև անգամ գիշերն էլ անց են կացնում տերրասում և ամիսներով ներս չեն գնում: Բաց ոդում աչդպես յերկար մը նալը շատ բարեբար ազդեցութիւն է ունենում

յերեխայի վրա: Չմեռը մինչև 15⁰ սառնամանիքին, յերբ քամի չկա, կարելի յե դուրս տանել յերեխաներին. յերեխաները շատ հեշտությամբ ընտելանում և իրենք են խնդրում զբոսանել: Սառնամանիք որը յերեխայի թշերին ճարպ, կավ, վազելին պետք է քսել, ցրտահարութիւնից պաշտպանելու համար: Արև որերին լավ է արևի վաննաներ ընդունել տալ յերեխաներին. արևի վաննան ընդունում են հետևյալ ձևով. բոլորովին մերկ յերեխային դնում են արևի տակ, սկզբում 5 րոպեյով, իսկ հետո ամեն որ ավելացնում են 5—10 րոպե. նայած յերեխայի դիմացկանությանը կարելի յե արևի վաննան ընդունել մինչ 1—2 ժամ: Արևի վաննայից հետո յերեխայի վրա ջուր են լցնում, հենց արևի տակ տաքացած ջուր. բացի դրանից, նայած տրամադրությանը յերեխան կարող է յերկար ժամանակ իադալ արեգակի տակ:

Տուբերկուլյոզավոր յերեխաների համար լավ է սովորեցնել՝ վոր նրանք առավոտյան թաց սրբիչով շփեն իրենց մարմինը. յերեխան շփում է առաջ մարմինը թաց սրբիչով, իսկ հետո բոլորովին չորացնում. շփելիս սկզբում վերցնում են սենյակի տաքության ջուր, իսկ հետո ավելի սառ ջրով են շփում, նայած թե յերեխան ինչպես է ախորժում. սառ ջուր քսելը պետք է դուր գա

յերեխային, չպետք է այնպես անել, վոր յերե-
խան մըսի. ջուր քսելուց հետո յերեխան պետք
է մի առժամանակ (5—10 բոպէ) պառկած մնա
անկողնում, ու հետո վեր կենա. բացօթյա մնա-
լը, արևի վաննաները, սառ ջրով շփելը պետք
է գործադրեն վոչ միայն տուբերկուլցողավորները,
ալ և ընդհանրապէս բոլոր յերեխաները: Այսպի-
սով կարելի չէ պաշտպանել նրանց շատ ու շատ
հիվանդութիւնները:

Տուբերկուլոզի բուժման միջոցների մեկն էլ
ձկան յուղն է: 3 տարեկան յերեխաներին պետք
է տալ ձկան յուղ որական 3 անգամ և ամեն
անգամին մի գդալ (մըգի): Քիչ մեծ յերեխա-
ներին պետք է տալ որական 2 անգամ և ամեն
անգամ մեկ հացի գդալ: Կան մայրեր, վորոնք
ըստ սովորականին կարծում են թե ամառը չի
կարելի ձկան յուղ տալ. ուստի և մեղնում յե-
րեխաները ապրիլից մինչև նոյեմբեր ձկան յուղ
չեն խմում: Մեծ սխալ է այդ. գիտողութիւն-
ները կատարելապէս ապացուցել են, վոր յերե-
խաներին ձկան յուղ ամառն էլ կարելի չէ խմ-
ցընել: Բանն այնպէս է, վոր ամառը ձկան յուղը
շուտ շուտ փչանում է, յեթե հնարավոր է ա-
մառը լավ պահել, վոր ձկան յուղը չփչանա, պետք
է ամառն էլ խմցնել յերեխաներին ձկան յուղը.
սովորաբար տալիս են ուտելուց $1/2$ ժամ առաջ.

կարիք չկա խնդրելու յերեխային և պարզե տալ
նրան, վոր ձկան յուղ ընդունի. ինչպէս որինակ՝
կանֆետ կամ մի ուրիշ քաղցր բան: Յերեխա-
ները շատ հաճախ դժվարութեամբ են խմում ձր-
կան յուղն այն պատճառով, վոր հենց ծնողնե-
րին իրենց դուր չի գալիս ձկան յուղի հոտը
և նրանք, կարծելով, վոր յերեխայի համար էլ,
անախորժ է այդ հոտը, սկսում են համոզել. ընդ-
հակառակը, յերբ ծնողները շատ պարզ ձևով,
առանց աղաչանքի յեն խմցնում, յերեխաները
շատ սիրով են խմում: Հիվանդանոցներում յե-
րեխաները համարյա յերբեք չեն հրաժարվում
ձկան յուղից:

Յերբ ընտանիքում հասակավոր հիվանդ կա,
վոր հագում է և խորիս ունի, պետք է աշխա-
տել այդպիսի հիվանդին առանձնացնել: Ընտա-
նիքի մեջ գտնվող հասակավոր հիվանդները պետք
է հետևեն վոր չթքեն հատակին, վոր թքեն հա-
տուկ թքամանի մեջ, չքնեն ուրիշ մեկի հետ
միևնույն անկողնում, վոր ջուր բաժակ, ունենա.
ջուկ գդալ, ջուկ սրբիչ, ջուկ թաշկինակ և այլն...:

Այժմ շատ քաղաքներում կան այսպէս կոչ-
վող «զիսպանսերներ» դրանք մի այնպիսի բու-
ժակայան հիմնարկներ են, վորոնք հսկում են
տուբերկուլցողավորների վրա, խորհուրդներ են
տալիս, թե ինչպէս նրանք պետք է ապրեն և

ուղարկում են նրանց համապատասխան բուժական հիմնարկություններ: Դիսպանսերում կան հատուկ քույրեր. «պատրոնած քույրեր», վորոնք այցելում են հիվանդներին տանը և սովորեցնում՝ ինչպես պետք է ապրել, ինչպես սարքել բնակարանը: Տուբերկուլյոզավոր չերեխանքն ել պետք է տանել դիսպանսեր. տուբերկուլյոզավոր չերեխաների համար քաղաքից դուրս շինում են հատուկ մանկապարտեզներ, ամառը նրանց ուղարկում են քաղաքից դուրս՝ վորեւ գաղութ: Առաջ կարծում էին, վոր պետք է անպատճառ շատ ուտացնել տուբերկուլյոզավորներին և յենթադրում էին, թէ վորքան ավելանա նրա քաշը, այնքան լավ նրա համար: Բայց այժմ ժխտվում է այդ և յենթադրում են, վոր տուբերկուլյոզավորի համար բավական է միայն լավ սնունդը:

ՍԻՓԻԼԻՍ

Սիֆիլիսը շատ լուրջ հիվանդութուն է. չերեխան կարող է ծնվել վարակված, կամ առողջ չերեխան կարող է վատնգվել հիվանդից: Այն ծնողները, վորոնք հիվանդ են սիֆիլիսով, պետք է բժշկվեն և պետք է բժշկվեն կատարելապես, հակառակ պարագայում նրանց ժառանգները մեռած կժնվեն, կամ թույլ և սիֆիլիսով հիվանդ կլինեն:

Սիֆիլիսը կարելի է բուրդովին բժշկել. բուժումը տևում է մի քանի տարի. սիֆիլիսով հիվանդը չպետք է ամուսնանա առանց բժշկի թույլատրության: Ընտանիքի միջ ապրող սիֆիլիսով չուրաքանչուր հիվանդ չպետք մոռանա, վոր կարող է վարակել շրջապատողներին. սիֆիլիսի միջոցին չերբեմնակի անհետանում են հիվանդության նշանները:

Վարակման տեսակետից ամենավտանգավորը բերանի ցանն է հանդիսանում. ուստի ընտանիքի մեջ ապրող սիֆիլիսով չուրաքանչուր հիվանդ պետք է խուսափի չերեխաներին համբուրելուց, մի ամանից ուտելուց, մի գդալով ուտելուց և այլն:

Նախադարոցական հասակում չերեխան կարող է վարակվել համբուլրից, ամանից. չերբեմն պատահում է, վոր կրկնվում են բնածին սիֆիլիսի նշանները: Սիֆիլիսի այսպես կրկնվելը կարող է հանդես գալ նույն իսկ յերկար դադարից հետո, յերբ չկա հիվանդության վոչ մի նշան: Սիֆիլիսը սովորաբար կրկնվում է չերեխայի 2-5 տարեկան հասակում և հանդես է գալիս մաշկի վրա ցանի պես կամ թրջվող պտուկների պես հետույքի անցքի շուրջը, բերանի մեջ և այլն:

Ուրիշ ժամանակ չերեռում են հանգուցներ, վորոնք հետո խոցոտում են մատները, գլուխը, վոսկրները և այլն:

Միֆիլիսով հիվանդ ծնողները պետք է ուշադրութիւն դարձնեն այդ տեսակ նշանների վրա և առանց ուշացնելու պետք է տանեն յերեխային բժշկի մոտ, վորպեսզի կանխեն հիվանդութեան ծանր ընթացքը: Վերջին ժամանակներս շատ քաղաքներում հատուկ վեներաբանական դիսպանսերներ գոյութիւն ունեն, ուր և պետք է դիմել հիվանդ յերեխաներին ցույց տալու համար:

Մաշկի հիվանդութիւնները յերեխայի մաշկը բնութագրող մի առանձին տեսակի բնութագրող շարքի մէջ է, զոր է գալիս, վորից նա առավել կեղտոտվում է և առաջանում են խոցիկներ:

Մեր կենցաղն այժմ այնպէս է, վոր շատ ընտանիքներ ազատ չեն միջատներից բլոշից, փայտոշիւից, լվից, վոշիւից: Սովորաբար շատ բիշ նշանակութիւն են տալիս այդ միջատներին, այնինչ նրանք մեծ չարիք են: Շատ հաճախ տեսնում են յերեխայի ամբողջ մարմնի վրա բլոշներ, լվերի և փայտոշիւների կծածներ. երեխան քորում է մարմինը, քորած տեղերը կեղտոտված են, և դրանից առաջ են գալիս թաթախում և ուժեղ բորբոքումներ: Վաշտոտութիւնն

եւ շատ է տարածված: մանր յերեխաների մարմնի վրա հաճախ շատ վոշիւներ են լինում. սակավ չեն այն դեպքերը, յերբ յերեխայի գլխի վրայի մաշկը հիվանդանում է վոշիւներից. փոքր վոշիւներ կարծում է, վոր վոշիւները ոգտակար են առողջութեան համար, կեղտոտ արցունք հեռացնում են. այդ սխալ և մի շատ վնասակար մոլորութիւն է: Փոքր յերեխաների մաշկը պետք է կարճ կտրել, վոր վոշիւները բուն չդնեն մաշկի մեջ:

Պետք է հետեւել գլխի մաքրութեանը, վոր վոշիւներ չլինեն. նմանապէս պետք է հետեւել, վոր մարմինն ու սպիտակեղենն եւ մաքուր լինեն:

Մաքրութեամբ կարելի է պաշտպանել յերեխային մաշկի մի շարք հիվանդութիւններից: Միջատներին պետք է կոտորել և նրա համար, վոր նրանք փոխանցում են շատ և շատ հիվանդութիւններ: Բժավոր տիֆն ու հետադարձ տիֆը մեծ չափերով տարածվում են այդ միջատների միջոցով (վոշիւների, փայտոշիւների):

Կան մաշկի այնպիսի վարակիչ հիվանդութիւններ, վորոնք հեշտութեամբ անցնում են մեկ յերեխայից մյուսին: Այդպիսի հիվանդութիւնների թվին է պատկանում քորը:

Խոսի պատճառը նրա տիզն է, վորը մտնում

մաշկի մեջ. քոսից մաշկը սառտիկ ըոր ե գալիս, իսկ քորեղուց առաջանում ե մաշկի բորբոքում քոսը ամենից շատ լինում ե ձեռքերի մատների արանքում, ազդրերի և ծնկների ներսը, մակերևույթի վրա:

Քոսի կանխարգելման համար ամենալավ միջոցը մարմնի հագուստի և սպիտակեղենի մաքրությունն ե, իսկ բուժման համար գործ են ածում ծծմբի ոծանակ (մահրամ):

Քոսն անցնում ե հիվանդից առողջին միատեղ քնելու միջոցով կամ մոտ շփման միջոցով. բայց սակավ դեպքերում նա կարող ե անցնել և կենդանիներից (ձիերից, շներից, ճագարներից):

Ցերեխաների վրա հաճախ պատահող մաշկի մի ուրիշ հիվանդությունն ել խուզող մկնատամն ե, վորը կարող ե վնասել թե մաշկը և թե գլխի մազոտ մասը:

Խուզող մկնատամնի նշանը. մաշկի վրա յերևան են գալիս փոքրիկ շրջաններ՝ 20 կողակի մեծության. այդ շրջանի շուրջը դուրս են գալիս մանր բշտիկներ: Այդ բշտիկները շուտ չորանում են, իսկ նրանց տեղը գոչանում ե թեփ. շրջանի մեջ մաշկը մի փոքր կարմրում ե և թեփոտում:

Ցերը մկնատամը գլխի վրա յե, մազերը թափվում են, ճաղատանում ե:

Այդ հիվանդությունն ունեցող յերեխաներին

պետք ե առանձնացնել. հիվանդի մկնատամին դեղ չոք են քսում. գլխի վրա առաջացած խուզող մկնատամը դժվար ե բժշկվում և դրա դեմ հատուկ միջոցներ են գործադրում (ռենտգենյան ճառագայթներ):

Ճիճուճեք Վերջին տարիներս խիստ տարածված են մեզ մոտ. յերեխաներից շատերը զանազան ճիճուճեր ունեն, վոր մեծ մասամբ ունենում են 3-8 տարեկան յերեխաները: Ճիճուճերն իրենց արտաքին ձևով բաժանվում են 2 տեսակի—կլոր և տափակ:

Շատ ծնողներ յերեխաների ամեն տեսակ հիվանդություններ բացատրում են ճիճուճերով. շատ հաճախ հենց վոր յերեխան գանգատվում ե փորացավից կամ գլխացավից, ծնողները պատրաստ են տալ նրան ճիճվահալած դեղեր. նմանապես շատ հաճախ յերեխայի արնապակատությունը, հետամնացությունը ծնողները բացատրում են ճիճուճերով:

Ճիճուճերից պետք ե բժշկել միայն այն ժամանակ, յերբ յերեխայի կղկղանքի մեջ իսկապես ճիճուճերի ձվեր կան, վորովհետև շատ անգամ զանազան հիվանդագլին նշաններ բացատրվում են բոլորովին այլ պատճառներով և վոչ ճիճուճերով:

Տեոնենք ինչ տեսակ ճիճուներ կան և ինչ հիվանդագին յերևութիներ են առաջացնում նրանք յերեխայի վրա:

Փսկարիս Իր տեսքով շատ նման է անդավարդին, բայց շատ յերկար է նրանից, մոտ 25 սանտ, ե և վարդագույն է. այդ կլոր ճիճուներն ապրում են հիվանդի աղիքների մեջ, յերբեմն հատ-հատ, իսկ յերբեմն հարյուրներով և հենց աղիքների մեջ ել ձուռ յեն ածում. ձվիկները մի կերպ ընկնում են ջրի մեջ կամ ուտելիքի վրա և դրանց հետ անցնում են մարդու աղիքների մեջ. այդ ձվիկներից դուրս չեկած սաղմն աղիքներից անցնում է արյունը, փորից անցնում է թոքերին, իսկ ախտեղից թքի հետ անց է կենում վարակվածի բերանը, և յերկրորդ անգամ կուլ գնալով աղիքների մեջ՝ դառնում է ճիճու: Ծիծվի ձվիկները կարելի չե կուլ տալ և փոշու հետ, կամ կեղտոտ մատների վրայից:

Պիտուկ Աղիքների մեջ գտնվող ճիճուներից ամենավորքը կլոր ճիճուն է, $1/2$ սանտիմ-յերկարությամբ, գլխավորապես գտնվում է աղիքների ամենաստորին մասում:

Նգ ճիճուն յերբեմն մեծ մասամբ գիշերները

դուրս են սողում աղիքի միջից և ձուռ գնում հետոյքի անցքի շուրջը. ճիճվի դուրս սողալուց սաստիկ քոր է գալիս հետույքի անցքը, յերեխաները դրանից ստիպված քորում են, ձվիկները կաշուս են յերեխայի մատներին ու կուլ գնում ստամոքսը, յերբ յերեխան մատները տանում է բերանը. դրանով է բացատրվում, թե ինչու այդ ճիճուներից յերկար ժամանակ չեն ազատվում յերեխաները: Կուլ գնացած ձվիկներից աղիքների մեջ դուրս են գալիս ճիճուներ:

Պիտուկ-ճիճուն հաճախ սողում է յերեխաների սեռական գործարանները և քոր առաջացնում, ուստի յերբ տեսնում եք, վոր յերեխայի սեռական գործարանները գրգռված են, պետք է լավ նայեք, թե այդ գործարանները և թե կրդկղանքը. պիտուկը սպիտակ և շարժուն փոքր վորդուկ է, շատ հեշտությամբ կարելի չե տեսնել նրան հասարակ աչքով:

Պիտուկ-ճիճուների վոչնչացման համար հարկավոր է առավոտյան և յերեկոյան լվանալ յերեխայի հիտուքի անցքը տաք ջրով և սալոնով. կտրել յեղունկները, մաքուր լվանալ ձեռքերը, երեխան պետք է քնի կոճկած վոտաշորով, վոր մատներով չքորի հետույքի անցքը. բացի դրանից կարելի չե որական մի անգամ սխտորի հոգնա անել, մի քանի որ շարունակ:

Ֆափակ ճիճու Բոլորն ել նման են միմյանց
և զանազանվում են միմյանցից միայն իրենց
մանրամասնություններով. այդ ճիճուները ժապա-
վենի նման են և ունեն կտորներ, վորոնք ճիճվի
գլխի համեմատությամբ նեղ են ու փոքր և
վերջին ամենափոքր կտորի վրա նստած ե գլուխը,
քորոցի գլխի մեծությամբ:

Տափակ ճիճվով վարակվում են հում մսից,
կամ լավ չեփած ու լավ չտապակած մսից:

Կան շատ տեսակ ճիճվահալած դեղեր. տա-
փակ ճիճուների դեմ յերբեմն գործ են ածում և
դդմի կորիզը. յերեխային տալիս են ուտելու
400,0 դդմի մաքրած կորիզ, իսկ 1 ժամից հե-
տո տալիս են 1 հացի գտալ լուծողական ձեթ:
Ճիճվին հեռացնելիս, պետք ե աշխատել, վոր
գլուխն ընկնի, հակառակ դեպքում մի քանի
ամսից հետո նորից կարող են դուրս գալ կտոր-
ները և ճիճուն նորից կզարգանա. ճիճուն հեռա-
ցնելիս, պետք ե լուծողականից հետո յերեխային
նստեցնել տաք ջրով անոթի վրա. ջրի գոլորշուց
ճիճուն ընկնում ե ամողջովին, միայն պետք ե
աշխատել, վոր յերեխան չշարժվի:

Բայց ավելի հեշտ ե նախագգուշական մի-
ջոցներ ձեռք առնել, վոր ճիճուներն ամենևին
չլինեն:

Ամենալավ միջոցը մաքրությունն ե, առանձ-

նապես ուշադրություն պետք ե դարձնել ձեռ-
քերի մաքրության վրա, շուտ շուտ կտրել յե-
ղունկները և կտրել շատ կարճ, վորովհետև յե-
ղունկների տակի կեղտի մեջ են մնում ճիճվի
ձվերը, վորոնք հետո, ուտելու ժամանակ, կե-
րակրի հետ ընկնում են բերանը և այդպիսով
վարակում յերեխաներին:

Դրա համար հարկավոր ե արգելել յերե-
խաներին խաղալ կեղտոտ իրերի հետ, չխմել
կեղտոտ ջուր, չթողնել քնել ուրիշների հետ մի-
ասին. հում միրգն ու կանաչեղենը մաքուր ջրով
լվանալ ու հետո գործածել և վերջապես պետք
ե հսկել, վոր կերակրի միսը լավ չեփած ու լավ
տապակած լինի:

Մեզ մոտ, Հայաստանում արտաքնոցները
հանդիսանում են ամենամեծ չարիքը ճիճուների
տարածման տեսակետից. շատ տեղերում բոլորո-
վին չկան արտաքնոցներ. թե յերեխաները, թե
մեծերը տուն են բերում արտաքնոցից իրենց
վոտներին կպած կեղտի հետ ճիճուների ձվերը
մեծ քանակությամբ, այն ճիճուների, վորոնք
գտնվում են կղկղանքի մեջ: Յերեխաները սողում
են և խաղում են հատակի վրա, կեղտոտում են
ձեռքերը այդ ձվիկներով ու հետո բերանը տա-
նելով այդ կեղտոտ ձեռքերը վարակվում են
ճիճվի ձվերով ու հիվանդանում:

Տափակ ճիճու Բոլորն ելնման են միմյանց
և զանազանվում են միմյանցից միայն իրենց
մանրամասնություններով. այդ ճիճուները ժապա-
վենի նման են և ունեն կտորներ, վորոնք ճիճվի
գլխի համեմատությամբ նեղ են ու փոքր և
վերջին ամենափոքր կտորի վրա նստած ե գլուխը,
քորոցի գլխի մեծությունը:

Տափակ ճիճվով վարակվում են հում մսից,
կամ լավ չեփած ու լավ չտապակած մսից:

Կան շատ տեսակ ճիճվահալած դեղեր. տա-
փակ ճիճուների դեմ յերբեմն գործ են ածում և
դդմի կորիզը. յերեխային տալիս են ուտելու
400,0 դդմի մաքրած կորիզ, իսկ 1 ժամից հե-
տո տալիս են 1 հացի գտալ լուծողական ձեթ:
Ճիճվին հեռացնելիս, պետք ե աշխատել, վոր
գլուխն ընկնի, հակառակ դեպքում մի քանի
ամսից հետո նորից կարող են դուրս գալ կտոր-
ները և ճիճուն նորից կզարգանա. ճիճուն հեռա-
ցնելիս, պետք ե լուծողականից հետո յերեխային
նստեցնել տաք ջրով անոթի վրա. ջրի գոլորշուց
ճիճուն ընկնում ե ամողջովին, միայն պետք ե
աշխատել, վոր յերեխան չշարժվի:

Բայց ավելի հեշտ ե նախազգուշական մի-
ջոցներ ձեռք առնել, վոր ճիճուներն ամենևին
չլինեն:

Ամենալավ միջոցը մաքրությունն ե, առանձ-

նապես ուշադրություն պետք ե դարձնել ձեռ-
քերի մաքրության վրա, շուտ շուտ կտրել յե-
ղունկները և կտրել շատ կարճ, վորովհետև յե-
ղունկների տակի կեղտի մեջ են մնում ճիճվի
ձվերը, վորոնք հետո, ուտելու ժամանակ, կե-
րակրի հետ ընկնում են բերանը և այդպիսով
վարակում յերեխաներին:

Դրա համար հարկավոր ե արգելել յերե-
խաներին խաղալ կեղտոտ իրերի հետ, չխմել
կեղտոտ ջուր, չթողնել քնել ուրիշների հետ մի-
ասին. հում միրգն ու կանաչեղենը մաքուր ջրով
լվանալ ու հետո գործածել և վերջապես պետք
ե հսկել, վոր կերակրի միսը լավ չեփած ու լավ
տապակած լինի:

Մեզ մոտ, Հայաստանում արտաքնոցները
հանդիսանում են ամենամեծ չարիքը ճիճուների
տարածման տեսակետից. շատ տեղերում բոլորո-
վին չկան արտաքնոցներ. թե յերեխաները, թե
մեծերը տուն են բերում արտաքնոցից իրենց
վռաներին կպած կեղտի հետ ճիճուների ձվերը
մեծ քանակությամբ, այն ճիճուների, վորոնք
գտնվում են կղկղանքի մեջ: Յերեխաները սողում
են և խաղում են հատակի վրա, կեղտոտում են
ձեռքերը այդ ձվիկներով ու հետո բերանը տա-
նելով այդ կեղտոտ ձեռքերը վարակվում են
ճիճվի ձվերով ու հիվանդանում:

Պակաս չարիք չեն և մեր առուները, վո-
րոնց ջուրը գործ են ածում վոչ միայն այգի-
ներն ու պարտեզները ջրելու համար, այլ և
լվացվելու, լողանալու, խմելու, աման լվանալու
համար, բայց չգիտեն, վոր աչդ ջրի մեջ թե
մարդու և թե կենդանիների կղկղանք կա:

Մի լողացնեք յերեխաներին այդ ջրով. մի
թույլ տաք, վոր նրանք լողանան այդ ջրում. մի
թույլ տաք վոր խմեն այդ ջուրը:

Մալաբա Այս հիվանդութունն ունի տաքու-
թյան նոպաներ, վորոնք կրկնվում են յուրաքան-
չյուր 1-2 օրը. տաքութունից առաջ սովորա-
բար լինում է դող. դողից հետո գալիս է տաքու-
թյունը, վորը տևում է մի քանի ժամ, վորից
հետո հիվանդը քրտնում է և տաքութունն անց-
նում:

Այս հիվանդութունը վոչ թե միայն յերե-
խաներն, այլ ունենում են և մեծերը:

Մարդը մարդուց չի վարակվում. վարակը
հիվանդից առողջին փոխանցում են մոծակները,
յերբ կծում են ու ծծում մարդու արյունը:

Ամենալավ միջոցը մալարիան բժշկելու հա-
մար խնինքն է. առանց բժշկութան, հիվանդու-
թյունը կարող է տևական դառնալ. այդ դեպ-
քում հիվանդը նիհարում է, գունատվում, դեղ-

նում, յերեխայի փորն ուռչում է, լուծ է ունե-
նում յերեսն ու վոտներն ուռչում են: Այս
տեսակ դեպքերում բացի մալարիայի բուժումից
պետք է բժշկել և զարգացած արնապակասու-
թյունը, այսինքն՝ պետք է լավ կերարել յերե-
խային (ձու, կաթ), ձկան չուղ խմեցնել, շուտ
շուտ դուրս բերել նրան թարմ ող, արևի տակ:

Յերեխաներին մալարիայից պաշտպանելու
համար, պետք է աշխատել այնպես պահել նրանց,
վոր մոծակները չկծեն նրանց. հայտնի չե, վոր
մոծակները կծում են յերեկոները, յերբ յերե-
խան խորը քնած է, ուստի մալարիոտ տեղերում
ինչպես Հայաստանն է, վորտեղ խոնավ ու ճահ-
ճոտ տեղեր շատ կան, վորտեղ հետևապես և
մոծակներ շատ կան, չպետք է դուրս բերել յե-
րեխաներին յերեկոները. պետք է բնակարանի
դռներն ու բուսածուկները պաշտպանել ցան-
ցով, վոր մոծակները չմտնեն բնակարան և գի-
շերը չկծեն վոչ վոքի. բոլորն էլ, մանավանդ յե-
րեխաները, պետք է քնեն ծածկոցի տակ. պետք է
միջոցներ ձեռք առնել մոծակների դեմ, կոտորել
նրանց բնակարանում, վոչնչացնել նրանց սե-
րունդը ճահիճներում. պետք է չորացնել ճահիճ-
ները, կանոնավորել առուները, չորացնել կանգ-
նած լճակներն ու ջրերը, բացի այս բոլորից,
պետք է առողջ յերեխաներին խնինք տալ, ա-

մառը շաբաթական 2 անգամ, վոր նրանք չհի-
վանդանան մալարիայով:

Կ ա Ե Ի Ե
Ս. Ե. Ե. Ե. Ե. Ե.

Այս հիվանդութիւնը շատ ե
պատահում Հայաստանում, մա-
նականդ ամառվա տաք ամիսներին և աշնանը:
Այս հիվանդութիւնն անցնում ե հիվանդից ա-
ռողջին անմիջապէս և հիվանդի գործածած իրերի
միջոցով:

Հիվանդը տաքութիւն չի ունենում, հաճախ
զանգատվում ե փորացավից, հաճախ փորացավ
ե լինում նոպաներով. ունի լուծ՝ ջրիկ և շուտ-
շուտ, լորճոտ և արյունախառը. բացի այդ,
լուծի ժամանակ կա և նիք: Հիվանդութեան ծա-
վալման շրջանում լուծը կարող ե լինել որական
40-50 անգամ, իսկ բարձի թող արած, չբժշկե-
ված կամ վատ բժշկած դեպքերում հիվանդու-
թիւնը յերկար ե տևում, յերբեմն մի քանի տա-
րի. այդ տեսակ դեպքերում լուծը սակավ ե լի-
նում, որական 4-5 անգամ. միշտ արյուն չի
լինում, ժամանակառ ժամանակ հիվանդութիւնը
սուր ընթացք ե ստանում և վատնում ե. կան
դեպքեր, յերբ հիվանդութիւնը կարող ե տալ
ծանր բարդութիւններ, ինչպէս որինակ՝ խոցեր
կարգի մեջ, իսկ այս հիվանդութիւնը ոպերա-
ցիայի կարիք ունի: Քանի նոր ե, այնքան հեշտ

ե կանխի՞ բժշկելը, ուստի հենց վոր արյուն
յերկա յերեխայի կղկղանքի մեջ, պետք ե պառ-
կեցնել նրան, հաց ու միս չտալ, բանջարեղեն
ու կանաչեղեն նույնպէս չի կարելի և իսկույն
հրավիրել բժշկին:

Այդ հիվանդութեան հաճախութիւնը մեզա-
նում բացատրվում ե նրանով, վոր ժողովուրդն
աղքատ ե, բնակվում ե խիտ, քնում են մի ան-
կողնում, ուտում են մի ամանից, ուրիշ խոսքով
ասած—մարդիկ վարակում են մեկը մյուսին:
Բացի դրանից, ամառվա շոգին մենք կարող ենք
վարակել և ուրիշ ճանապարհով, յերբ խմում
ենք առվի կեղտոտ ջուրը: Ապա մեր կեղտոտ
արտաքնոցները, վորպիսի մեծ չարիքներ: Այդ
հիվանդութիւնից պաշտպանվելու համար, ինչ-
պէս և ճիճուններից, նախ և առաջ պետք ե
մտածել մաքրութեան մասին, մի ամանով չու-
տել, չքնել ուրիշի հետ մի անկողնում, առվի
ջուր չխմել, չլվանալ առվում վոչ մի աման,
կոտորել ճանճերին, վորոնք վարակված իրերից
փոխանցում են հիվանդութիւնը մեզ ուտելիքի
և խմելիքի միջոցով:

Յերեխայի սնունդը Անհրաժեշտ ե, վոր յերեխան
յեվ ստամոսի ա- կանոնավոր սնունդ ստանա.
դիւցնելի հիվանդու- մայրերն այս խնդրում հաճախ
րյունները են սխալ գործում: Փոքր յերեխային պետք ե կե-

րակրել որտեղ 4 անգամ. անհրաժեշտ է՝ սովորեցնել յերեխային իր ժամանակին կերակուր ընդունել. բոլորովին ավելորդ է յերեխային անկանոն կերակրելը: Յեթե յերեխան չի ցանկանում ուտել իր ժամանակին, հարկ չկա ստիպել նրան, այլ պետք է նրան կերակուր տալ նշանակված մյուս ժամին:

Յերեխան պետք է խառը կերակուր ընդունի. կան մայրեր, վորոնք կերակրում են յերեխային միշտ կաթով. այդ վոչ թե միայն անպետք է, այլ մինչև անգամ և վնասակար: Այն յերեխաները, վորոնք իբրև կերակուր կաթ շատ են գործածում, լինում են գունատ, ուռած և տառապում են կապոթությունից: 3-7 տարեկան յերեխան պետք է գործածի 1—2 բաժակ կաթ: Անհրաժեշտ է հետևել, վոր կաթը յեռացրած լինի:

Կովերն ունեն զանազան հիվանդություններ՝ դաբաղ, տուբերկուլյուզ, վորոնք կարող են անցնել և յերեխաներին կաթի միջոցով. կարող է անցնել և վորովայնի տիֆը. այս նկատառումներից պետք է յեռացրած կաթ տալ յերեխաներին, վորովհետև յեռացնելով սպանվում է կաթի միջի վարակը: Այսու ժամանակ յերեխաներին շատ է պատահում արջունուծ հիվանդություն—կանիճը, վորն անցնում է կեղտոտված ջրից, մրգից, ուստի պետք է յեռացրած ջուր տալ յե-

րեխային, միրգը պետք է լվանալ յեռացրած ջրով ու հետո տալ յերեխային: Կանիճը—տարափոխիկ հիվանդություն է, ուստի այդ հիվանդությունն ունեցողի կղկղանքը պետք է հավաքել մի առանձին անոթի մեջ և վրան կարբոլյան թթու լցնել:

Շատ անգամ մայրերը գանգատվում են, վոր յերեխան քիչ է ուտում, մինչդեռ յերբ հարց ու փորձ ենք անում, իմանում ենք, վոր ճիշտ է՝ յերեխան չի ուտում այնքան, վորքան ցանկալի չէ մոր համար, բայց ուտում է իր պահանջի համեմատ: Չպետք է մոռանալ, վոր տարբեր յերեխաներ միատեսակ չափով չեն ուտում: Մեկին մի չափով մյուսին այլ չափով է հարկավոր տալ կերակուրը: Շատ անգամ տեսնում ենք, վոր գեր յերեխան շատ քիչ է ուտում, մինչդեռ մյուսը, նիհարը յերեխան շատ է ուտում, բայց չի գիրանում: Մայրերը կարծում են, թե վորքան գեր լինի յերեխան, այնքան առողջ է նա, բայց այդ ճիշտ չէ. յերեխայի գիրությունը միշտ էլ առողջության նշան չի: Ամենևին հարկավոր չէ ջանք գործադրել, վոր յերեխան գեր լինի. հարկավոր չէ ստիպել յերեխային, վոր նա ուտի. պետք է աշխատել, վոր նա սովածանա և ինքը խնդրի ուտել: Շատ անգամ տեսել ենք, վոր յերբ ստիպում են յերեխային ուտել, նա զզվում է կերակրից և նույնիսկ փսխում է ու այդ փսխման

առաջը շատ դժվար է լինում առնել: 3.7 տարեկան յերեխաների համար ամենալավը հասարակ ու խառը կերակուրն է, վորը քիչ է զանազանվում մեծերի կերակրից, բայց պակաս կոշտ է: Այս հասակի յերեխային կարելի չե տալ շաքարեղան 3.4 անգամ միս, կամ ամեն ուր. պետք է տալ բավականին բանջարեղեն, ձու շատ չպետք է տալ, բավական է որական 1-2 հատ. կարելի չե քիչ աղի ուտելիք տալ, (խավիար, սելյոդկա) պետք է խոստովել ապխտած ուտելիքից (յերչիկ), բայց վիտչինա կարելի չե տալ. պետք է տալ զանազան մրգեր, ընկույզ: Այդպիսով կարելի չե տալ յերեխային ախորժելի և նրա համար, բազմազան կերակուր:

Յուրաքանչյուր մայր պետք է իմանա, վոր նա շատ բան կարող է անել իր յերեխային հիվադնություններից փրկելու համար: Յերեխաների հիվանդությունների մեծ մասի համար հանցավոր են հենց նրանց շրջապատողները. շատ վտանգներից կարելի չե խուսախել, յեթե իմանան և ուշադիր վերաբերվեն դեպի յերեխան, քիչ չեն մեղ մոտ և վատ սովորություններն ու նախապաշարումները, վորոնցից պետք է ազատվել:

Մայրեր, ձեր ձեռքումն է ձեր յերեխաների առողջությունը, ձեզնից է կախված մեծացնել նրանց, իբրև ամրակազմ, առողջ և ուժեղ

քաղաքացիներ, ձեզնից է կախված տալ պետությանն առույգ և լավ փոխարինողներ:

Ձանք գործ դրեք այդ անելու համար:

Յ Ո Ւ Յ Ա Կ

ՏՆԱՅԻՆ ԴԵՂԱՐԱՆԻ

- | | |
|--|---------|
| * 1. Յող | 30 գրամ |
| 2. Յեթերային—վալերյանի կաթիլներ (Эфирно—валериан. капли) | 20,0 » |
| 3. Անուշադրի վոգի (Нашатырны спирт.) | 30,0 » |
| 4. Զտած սողա. | 100,0 » |
| 5. Բորական թթու (Борная кислота) | 50,0 » |
| 6. Խինին (հապերով) 0,25—0,3 | 50 հատ |
| 7. Ս պ ի ր տ. | 50,0 |
| 8. Բամբակ (հիգրոսկոպիկ) | 200,0 » |
| 9. Բինտեր 5—10 սանտիմ. լայնության | 5 հատ |
| 10. Մարլի (փափուկ) | 2 մետր. |

11. Մարլի (Стерелизованный) 2 տուփ
12. Հասարակ բամբակ. . . 1 կիլո
13. Տգկահառի յուղ (касторовое
масло) . . . 50,0
14. Բոակենի կաթիլներ . . 25,0
- *15. Փսերաֆորմ . . . 20,0
16. Զերմաչափ (մարմնի) . . 1 հատ

Լուծողականը (կաստորկա) և խիլինը տալ
բժշկի խորհրդով. նշանակած (*) դեղերը վաճառ-
վածք են—յերեխաներից հեռու պահել:



8250



ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.

1
2